



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗЪ.“

Въ 1890 году газета „Кавказъ“ будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно, не исключая и понедѣльниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Тифлисъ.	Съ перес. по Имперіи.	По почтовому союзу.
На годъ..... 11 р. 50 к.	На годъ..... 18 р. — к.	На годъ..... 18 р. 40 к.
„ 1/2 года..... 6 „ — „	„ 1/2 года..... 7 „ — „	„ 1/2 года..... 10 „ — „
„ 3 мѣсяца..... 3 „ 50 „	„ 3 мѣсяца..... 4 „ — „	„ 3 мѣсяца..... 6 „ — „
„ 1 мѣсяць..... 1 „ 50 „	„ 1 мѣсяць..... 1 „ 75 „	„ 1 мѣсяць..... 2 „ — „

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, уголъ Головинскаго проспекта и Барятинской улицы, домъ Ротинава.

Для иногороднихъ адресоваться: Тифлисъ, въ редакцію газеты „КАВКАЗЪ“.

Отъ Конторы. Объявленія изъ Москвы, С.-Петербурга, Царства Польскаго и изъ-за границы, кромѣ Франціи, принимаются исключительно въ центральной конторѣ объявленій, бывшей Л. Метцль, въ Москвѣ, Мясницкая, домъ Спиридонова.

3—3

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Օտարները ոգուտ են քաղում մեր տգիտութիւնը.—Ներքին Տեսութիւն.—Մեզանից առաջ ջրհեղեղ. Նամակ Ախալցխայից. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ Տեսութիւն.—Պաշտօնական ճառախօսութիւններ հայոց պատրիարքարանում. Լոնդոնի պարսից նախկին դեսպան Մէլքոն-խան. Նամակ Ելէյցարիայից. Արտաքին Լուրեր.—Հնդկ-Գիւրներ. —ԲՈՐՍԱ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Ջինադ.

ՕՏԱՐՆԵՐԸ ՕԳՈՒՏ ԵՆ ԲԱՎԱՆՈՒՄ ՄԵՐ ՏԻՖՈՒԹԻՒՆԻՑ

Այն իրողութիւնը, թէ օտարները միշտ օգուտ են քաղում մեր, կովկասցիների, տգիտութիւնից,—յայտնի է արդէն: Իրանը շահվում են, իսկ մենք վնասվում ենք: Բայց արդ արդէն ամենքին յայտնի իրողութիւնը մի գեղեցիկ օրինակով հաստատելու համար, բերում ենք ընթերցողներին մեր թղթակցի մի նամակը Ալդաշից, որը և ղետեղում ենք այստեղ ամբողջապէս:

ԱՏԱ ՆԱՄԱԿԸ:

«Ինչպէս յայտնի է, Անդրկովկասեան Լեռքեր կայարանի մօտ մի քանի յոյն գրամատերեր, սրանից մի քանի տարի առաջ հիմնել են մի գործարան, մատուցողական արմատը արտահանելու համար: Այդ արմատի պուղը նրանք առնում են 12—15 կոպեկով և շատ մեծ քանակութեամբ, գուցէ տարեկան մինչև 500,000 պուղ ուղարկում են արտասահման, գլխաւորապէս Ա-

մերիկա, նախապէս չորացնելով արմատը և չորագործարանի միջոցով հակեր կապելով: Մինչև այժմ ճիշդ չիմացանք թէ ինչի համար է գործածվում այդ արմատը, որովհետև յոյները այդ հանգամանքը ծածուկ են պահում և հարցնողներին այլ և այլ անհաւատալի բացատրութիւններ են տալիս: Ճիշդ յայտնի է միայն, որ մատուցակը ղեղադրւում է գործածվում բաւական մեծ քանակութեամբ, նմանապէս նրանից պատրաստվում են մի տեսակ կոնֆետներ, գլխաւորապէս հաղելու ղէմ: Բայց չենք հասկանում, մի՞թէ այդ տեսակ գործածութեան համար այդքան ահազին քանակութիւն է հարկաւոր արտահանել: Ինչ և ինչ մատուցակի գլխաւոր գործածութիւնը մինչև այժմ մնում է մեզ անյայտ, որ նշան է մեր ամենախորին տգիտութեան և անհետաքրքրութեան: Գաղտնիքը կարող էին խմանալ Եւրոպայում և Ամերիկայում ապրող մեր ազգայինները, բայց ինչի միջև այժմ նրանք այդ հարցի մասին ոչինչ չեն գրում.—մեզ միանգամայն դարձաքննում է: Այս տարի էլ, մի և նոյն Լեռքեր կայարանում սկսել են առնել մատուցակի արմատը և անդրկասից: Կան առնողներ և Ուլարի կայարանում: Անդրկասցիների գաղ մեծ յուզմունք առաջ բերեց յոյների չըջանում, և նրանք ամեն միջոց սկսեցին գործածել, որպէս զի անդրկասցիք չը կարողանան այստեղ մնալ ու մրցել իրանց հետ: Բայց անդրկասցիների գաղ այն օգուտը բերեց հասարակ ժողովրդին, որ մատուցակի պուղը, 12—15 կոպեկի գինը յանկարծ բարձրացաւ մինչև 20 կոպեկ: Անդրկասցիք, ինչպէս պատմում են, առնեն գործարաններ և Զմիւռնիայի շրջակայներում: Նրանց անհղով կովկասեան մատուցակը ստոր տեսակիցն է և այդ բերքի տեսակներին մէջ կերպով թէ չորրորդ տեղն է գրաւում, առաջին տեսակը Սպանիային է, երկրորդը, միջակը՝ Թիւրքիային: Թէև մատուցակի մասին բաւական գոյով է մեր լրագրիւններում, բայց մինչև այժմ զոր գործարանները պարզ չէ մեզ համար, այդ պատճառով մեր յոյսը (Մշակի)

ՂԵՑԻԼ ԺԱՊՈՂ ԴԵՄԵՐՆ ԷՐ ՆԱՅՈՒՄ ՄԻՅԱՆ՝ ՈՒՈՒՆԱՅՈՒԼ ՆԱՍԵԼ:

—Նստի՛ր, նորից ասեց նրան տիկինը.—ինչ ես այդչափ ինձ նայում:

—Օ՛հ, խանձմ, գոչեց Սիւրէյան.—միթէ մարդ կարող է կշտանալ լուսնի գեղեցկութիւնը դիտելուց:

—Լա՛ւ, լա՛ւ, ծիծաղեց տիկինը.—դեռ շատ չուտ է այդպիսի խօսակցութիւնների... դու ինձ լաւ տղայ ես երևում... այ. բաւական էլ սիրում ես... նստի՛ր դեռ ես ճաշենք փոքր ինչ... շատ ման եկայ ես այժմ շատ էլ քաղցած եմ, իսկ դու:

—Ե՛ս, ո՛չ, ասեց Սիւրէյան.—ես քաղցած չեմ:

—Հասկանում եմ, ասեց տիկինը.—իմ գէմբիս գեղեցկութիւնը քեզ կշտացնում է. լաւ ուրեմն, դու ինձ նայիր և ես կուտեմ... բայց տեսնե՛ք:

—Օ՛հ, դժժ, գոչեց երիտասարդը ջերմութեամբ.—թոյն էլ տաք, կառնեմ և մի ումպով կը դատարկեմ:

—Դու՛ս, ասեց տիկինը.—Լէյլա Մէջլումն ես կարգացել—դա շատ հին սիրային խօսք է, այ...

վրա է, որ սա մեզ կը պարզէ այդ գաղտնիքը: Այո, ամօթ է մեզ համար, որ այն քանի տարի է չենք կարողանում մեր երկրից արտահանվող բերքի գործարարութեան մասին մի ճիշդ հասկացողութիւն կազմել, մի որոշ տեղեկութիւն իմանալ: Երևակայում ենք, թէ իրան ծիծաղում են մեզ վրա թէ յոյն և թէ անգլիացի դրամատիկները:

Այդ նամակի մէջ յայտնված դատողութեանը մենք մեր կողմից ոչինչ չունենք աւելացնելու: Դէպքը ինքն ըստ ինքնան բաւական պերճախօս է. մեր երկիրը իր մէջ անթիւ ու անհամար հարստութիւններ է պարունակում, իսկ մենք, մեր խորին տգիտութեան պատճառով, չը գիտենք օգտվել այդ հարստութիւններից և պէտք է սառնասրտութեամբ նայենք, թէ ինչպէս օտարները գալով մեր երկիրը, մեր քթի տաշի՛ն շահվում, հարստանում են, օգտվելով այն բնական բերքերից, որոնցից մենք ինքներս ոչ թէ միայն չը գիտենք օգտվել, այլ և որոնց գործարարութիւնն անգամ չը գիտենք, որոնց արժէքն էլ չենք գնահատում...

Այդ հարցի առիթով երկար ու բարակ փիլիսոփայութիւն անելը աւելորդ է. իրողութիւնը յայտնի է և ճարպիկ օտարների ձեռքով մեր հարստահարված լինելը, մեր սեփական տգիտութեան պատճառով՝ կատարելապէս ապացուցված ճշմարտութիւն է արդէն:

Բայց քանի որ մեր թղթակիցը խնդրում է մեզ բացատրել թէ ի՞նչ բանի համար է գործածվում մատուցակ ասված արմատը, մենք կաշխատենք կարճաւոյտ կերպով բաւականացնել այստեղ նրա հարցասիրութիւնը:

Մատուցակը (СОДОЛЖЕНЫЙ РОСЕНЪ, лакрица, reglisse, Sussholz, Lakritzen-saft) շատ բազմակողմանի գործարարութիւն ունի. քաղցրակիրք երկիրներում:

Մատուցակը արմատից, եփ տալու միջոցով ստացվող հիւլթը, որը այնուհետեւ պնդացվում է, գլխաւորապէս պատրաստվում է Սպանիայում, Ֆրանսիայում, Իտալիայի Սիցիլիա և Կալաբրիա նահանգներում: Անգլիայում և հարաւային Ռուսաստանում: Պնդացրած դրութեան մէջ մատուցակի հիւլթը դառնում է շագանակադոյն, ունի քաղցր համ և մի առանձին յատկանիշ հոտ: Սպանիայում ընդարձակ դաշտեր բռնված են մատուցակի ցանքսերով և այդ արմատի տմենալու տեսակը Սպանիայում համարվում է Սարաթոսա քաղաքի շրջակայներում մշակվողը: Սակայն Իտալիայի Կալաբրիա նահանգի դաշտե-

րում մշակվողը ամբողջ աշխարհում ամենապերագանն է համարվում: Ֆրանսիայի Էնդր-է-Ղուար, Գար և Հերո գաւառների ընդարձակ դաշտերը նմանապէս բռնված են մատուցակի ցանքսերով: Բայց արմատի բերքի քանակութիւնը դարձեալ չէ բաւականացնում երկրի այլ և այլ պահանջներին: Նոյնը կարելի է ասել և Անգլիայի մասին, որտեղ նմանապէս ցանում են մատուցակը Եօրկշիր, Նօրթամպտոնշիր և Սուրբէյ գաւառներում: Ռուսաստանում մատուցակը վայրերի դրութեան մէջ բուսնում է զըլխաւորապէս Վօլգա գետի երկայնութեամբ: Սակայն արմատի գործարարութիւնը այնքան ընդարձակ և բազմակողմանի է, որ այդ երկրներից ոչ մէկը իր արտադրած բերքի քանակութեամբ չէ բաւականանում, այլ դարձեալ մեծ քանակութեամբ բերում, ներմուծում է այդ բերքը ուրիշ երկրներից, զլխաւորապէս արեւելից:

Փորձենք թվել այժմ մատուցակի հիւլթի բազմակողմանի գործարարութիւնների գլխաւորները, ամբողջ Եւրոպայում ժողովուրդը գործ է ածում մատուցակի հիւլթը պնդացրած դրութեան մէջ, ուտելով կոնֆետների պէս հազիւ դէմ բացի սրանից մատուցակը ահազին քանակութեամբ գործարարութիւն է դառնում ամբողջ աշխարհի զարեջրի գործարաններում, քանի որ այդ արմատի հիւլթը գործ են ածում զարեջրի համը քաղցրացնելու համար, իսկ Անգլիայում խառնում են և պօրտ են անուանված զարեջրին, այդ հոգեւորական խմիչքը պատրաստելու ժամանակ: Բացի սրանից մատուցակի արմատը իր մէջ սօսնձային մասեր պարունակելու պատճառով, նրա հիւլթը գործ են ածում նկարչութեան համար մի քանի ներկեր պատրաստելու ժամանակ, և նոյն իսկ կոշիկները մաքրելու համար դործածվող վախի բաղադրութեան մէջ է մտնում այդ արմատի սօսնձանման հիւլթը: Մատուցակն ունի և բժշկական գործարարութիւն, ուրեմն պահանջվում է և ղեղադրւում Ալդաշի նա գործ է ածվում միմյանի մաքրված դրութեան մէջ, առանձին բաղադրեալ պատրաստութեանը ենթարկվելուց յետոյ:

Որպէս բժշկական միջոց, ի միջի այլոց, մատուցակի հիւլթը, առանձին պատրաստութեան ենթարկվելով և խառնված լինելով անիս—իւղի և շաքարի հետ տալիս է այն հոգեւորական դեղը, որը կրում է «Կաչու» (Cachou) ֆրանսիական անունը: Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ ԿԱՆ

ՋԻՆԱՂ

(Կ. Պօլսի թրքական զրոյց)

Դ.

Դառան, որը մի ծերունի ներքինի էր, ապշած իր աւջկից անցնող երիտասարդին նայեց, պահ մի պուլսը ջորեց, յետոյ թափահարեց և դուռը փակեց:

—Ջէֆէր, գոչեց նրան տիկինը կանգ առնելով սանդուղաների գլխին.—տես թէ ուտելու ինչ կայ և բեր մեզ... եղբորս որդին է էֆէնդին:

—Հըմ... մոռաց ներքինին և մի դուռ բաց նայով անհետացաւ:

Տիկինը ներս մտաւ, արձակեց ճակատը, մաշերը և ծնօտը ծածկող սպիտակ շղարչեայ փաթաթը և ժպտալով ասեց երիտասարդին.

—Համեցէ՛ք... տեսե՛ք թէ ինչպէս ձեզ իմ եղբորս որդի արի, այդպէս պէտք էր, մեր Ջէֆէրը շատ կծու ներքինի է:

Իսկ Սիւրէյան կանգնած՝ հիացմամբ այդ գե-

րիտասարդին.—ապա, տեսնեմ գտածդ ինչ է:

Սիւրէյան ոտքը ոտքի մօտ բերեց—ֆրանսիացիների թատրոնում նա տեսել էր.—մի ծանկը գետնին դրաւ և ասեց սիրահարի դօնքիտութեամբ:

—Խանձմ, ձեր գեղեցկութիւնը նման է այն լուսնկայ գիւնրին, երբ ինձ նման դժբաղդ մի երիտասարդ հա... հա...

Էլ չը գիտէր ինչ ասել... կարմեց, հապեց, չըբաժ տեղը նորից ցուցամտաւ ճակատին դուռ...:

—Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց տիկինը.—դուք, ոտքի ելի՛ր և նորից մտածի՛ր... բայց նախ և առաջ ուտենք... մի բաժակ զինի և այդ կը գտնի փնտաւած խօսքը:

Ջէֆէրը ներս բերեց մի շիւ գինի և երկու երիտասարդները սկսեցին ճաշել, տիկինը չը մոռացաւ մի բաժակ գինի լցնել և տալ երիտասարդին, որը և առաւ, մի ծիծաղելի «ճխ» արձակեց և խմեց...

—Հիմալի է... ծիծաղեց տիկինը.—երևի Եիւրին և Ֆէրհատն էլ ես կարողացել... դու, ինչպէս երևում է, գիտուն էլ ես:

—Ե՛ս, ասեց Սիւրէյան.—Սուլթանին աւարտել եմ... խօսում եմ ֆրանսերէն...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԶԱՆԻՑ ԱՌԱՋ ԶՐԶԵՆԵՐԿ

Ֆրանսիական սանձարձակ միապետության ներկայացուցիչները մինը՝ ասեց. «après nous le déluge» — «մեզանից յետոյ ջրհեղեղ»։ Այդպէս էլին մտածում մի ժամանակ այն մարդիկ, որոնք զուլն էին կանգնած Ֆրանսիական պետության դրոշմին, և որոնք այն և ձայն կրկնում էին — «պետությունը ես եմ»։

Կատարելապէս դառ հակառակ աշխարհայեցողութիւն ունեն մեր ժողովրդի մէջ այս և այն դրոշմ, այս և այն հիմնարկութեան դուրս կանգնած անձինք։ Մեր մէջ, ամեն մի անձ, որը մի որ և է հիմնարկութեան ղեկը իր ձեռքն է առնում, կամ ստանձնում է մի որ և է բարձր պաշտօն, կամ ձեռնարկում է մի որ և է գրական կամ հասարակական գործին, ամենից առաջ, աջ և ձախ դուռ է «avant nous le déluge», — «մեզանից առաջ ջրհեղեղ»։

Դա մի ապերախտ, փորձող, և կատարելապէս անընդունալից արտայայտող ցանկութիւն է, որով վարակւած են եղել հայոց ժողովրդի մէջ դեր կատարող անձինք, սկսած նոյն իսկ մեր պատմութեան հին դարերից, մինչև մեր օրերը։ Փաստերը անթիւ և անհամար են։

Դա, ընդհանուր, պատմական բնութագրութիւն ստացած երևոյթ է։ Նոյն խորագրութիւնը և փորձողութիւնը երևում է մեր հասարակական գործերի և միւս բոլոր շրջաններում։ Դիցուք մէկը յանձն է առնում մի որ և է օրդան հրատարակելու։ Նա երբեք չէ յայտնում, որ ինքը կաշխատի փորձով իր նախորդ գործողների սխալներից, և շարունակել նրանց սկսած լաւ գործերը, աւելի արժարձել նրանց յայտնած օգտակար մտքերը, — այլ ընդհակառակը, աջ և ձախ գոչում է, որ «իրանից առաջ ջրհեղեղ է եղել», ոչ ոք ոչինչ չէ շինել, և ինքն է, որ զաւրիս է չլայն և երջանկութիւն սփռելու։

Մէկը ստանձնում է մի որ և է պարոցում տեսչի պաշտօն, — նա պէտք է ղեկավարի զարոցը, և պատասխանատու է նրա առաջադրութեան համար։ Եւ ահա, փոխանակ ծանօթանալու իր նախորդների գործունէութեան լաւ և վատ կողմերի հետ, նոր տեսուչը ամենից առաջ սկսում է տարածել, որ «զարոցը տակն ու վրա է եղել, կարգ չը կայ, ուսում չը կայ, ուսուցիչները վատ են, աշակերտները ոչինչ չը գիտեն, զարոցի ներկայան միջոցները ողորմելի են»։ Մի խօսքով նա, այդ նոր տեսուչը, ամենաանխելոք կերպով յեղաշրջում է գործերը, ծածկում է փաստերը, օրպէս զի մի տարուց յետոյ հաւատացնի միամիտներին, թէ եթէ զարոցում մի լաւ բան կայ, դրանով ամենքը իրան, իր եւանդիկն և հրմուռութեան են պարտական....

Ուրիշ շրջաններից օրինակ բերել կը նշանակի կրկնել նոյն միտքը, որովհետեւ ամեն տեղ, ամեն տեսակ գործերում, նկատելի է նոյն խորամանկութիւնը, նոյն լարակալութիւնը, նոյն փորձողութիւնը, որով դիմապատկած են այդպէս անողները, և երազում են թէ իրանց խորհրդակալութիւնը կարող են խնդրութեան տեղ ծախել....

— Ինչու, ասեց տիկինը — հայտն, եթէ ֆրանսիական ասեցիկ այդ փոխելիք սխալին սուր խօսքը երկու ձեռքերս....

— Ո՛չ երբեք, քաջաց Սիւրէյան ընդհատելով — այն ժամանակ թոյլ պիտի տաս ինձ աւելի համարձակութիւն ստանալ։

Եւ մտեցաւ տիկինը, որը դէմքը խոփաւելով հրեց նրան։

— Տեղդ հանդիստ նստիր.... շտապելու պէտք չը կայ։

— Զարմանալի է, մտածեց Սիւրէյան — ինչու այսպէս զփուրկութեամբ է անձնատուր լինում, երբ արդէն իր տանն է ընդունել ինձ։

Տիկինը ակնթարթով ուսում էր և երբեմն զաղտաբող Սիւրէյանին նայելով՝ ծիծաղում էր, յետոյ խորով գիւնի և անդադար դռնում.

— Գտար, էֆէնդէմ, սուլթանիէն աշակերտ.... Սայիդ փաշայի կնոջ եղբայր.... զտար....

Յանկարծ հեռուից լսվեց մի աղաղակ, որը շատ էր նմանում երեխաների աղաղակներին։

— Հիմա... դուքն զուսնաժափ Սիւրէյան վեր թռչելով — այս ինչ էր....

Աղաղակը կրկնվեց, այս անգամ տիկինն ևս զուսնաժափվեց և օտքի ելաւ.

— Դուստ, չուստ, դուքն նա յուզված — հեռա-

Ահա այս է մեր մէջ ամեն տեսակ գործողների գլխաւոր յատկանիշը։ Եւ այդ յատկանիշը ամենից առաջ ցայտ է տալիս, թէ որպիսի ողորմակներ են ընդհանրապէս այն անձինք, որոնք իրանց ոչնչութիւնը ուզում են ծածկել ուրիշների վրա ստուեր գցելով։ Ամեն մի գործարարական մի այլ ասպարէզում, եթէ իր մէջ ոչ ոք, չնորհ և տաղանդ է նկատու, կարող է միշտ գործ տեսնել, կարող է միշտ իր նախորդի լաւ արածի վրա մի բան աւելացնել, կարող է միշտ իր ետեւից մի հետք թողնել։ Բայց երբ այդպիսի գործողներից ամեն միքը նախ և առաջ աշխատում է համոզել, որ «իրանից առաջ ջրհեղեղ է եղել», որ իր նախորդները ոչինչ չեն շինել, և ամեն բան քանդված, վայրենի դրութեան մէջ է եղել, — դրանով այդպիսի գործողը ուրիշ բան չէ անում, այլ միայն համոզում է, որ ինքը դուրի է որ և է չնորհից, որ և է տաղանդիկ, նախաձեռնող լինելու որ և է հմտութիւնից, և մի ողորմելի պարագայ է, որը ուզում է փայլել ուրիշների հաշուով, որը աշխատում է ցոյց տալ թէ չորս կողմը ոչինչ չը կայ, օրպէս զի այդ ոչինչ ու լի է ան մէջ ինքը մի բան երեւայ....

Այդպիսի գործողներով ոչ մի գործ, ոչ մի հիմնարկութիւն, ի հարկէ, առաջ չի գնայ։ Հասարակութեանը տաղանդաւոր, շնորհով, եւանդաւոր և խելօք գործողներ են հարկաւոր, և ոչ թէ փորձողի, խորհրդակալ անձնաւորութիւններ։

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՑԻՑ

Յունվարի 14-ին

Աւելորդ չի լինի առաջ բերել յունվարի 11-ի Ախալցխայի Գումարի նստի փամբանակի իրաւասու պ. Տէր-Գրիգորեանի քաղաքացիութիւնը ուժի մատնելը, արտասանած այն խօսքերը, որոնք ջերմ համակրութեամբ ընդունվեցան ունիւզիւններից. նա ասեց. «պ.պ. ամօթ է յիշելն անգամ, երբ խօսվում է քաղաքացիութիւնը կրճատելու մասին. քաղաքացիութիւնը ինչպիսի ներկայացուցիչ ամբողջ հասարակութեան, ամեն հանգամանքներում նա ունի բացառական ծախսեր, որպիսիներից ազատ է մեզանից իւրաքանչիւրը. նա, իբրեւ ներկայացուցիչ քաղաքի, ունենալու է իր պատշաճաւոր դիրքը, ընդունելութիւններ և այցելութիւններ քաղաքային և զինուորական ներկայացուցիչների, կենցաղավարական ամենայն յարմարութիւններ, պաշտօնական զգեստներ, համապատասխան բնակարան, հիւրասրբել և հիւրասիրիկ։ Բայց մեր նոր ընտրվելի քաղաքացիութիւնը, ի նկատի ունենալով մեր քաղաքային արկղի ներկայական անհաւելութիւնը, քաղաքի հազարաւոր կարողութիւնները, երբեք թուլացնելու չէ իր եւանդը, իր գործունէութեան ճիշդ քաղաքի բարեկարգութեան և բարեկաւարտութեան համար. նա պէտք է անձնադուր լինի. նա փառքը բարձրութիւնը մի կողմ թողած, ի նկատի ունենալու է, որ քաղաքը հազարաւոր կարիքների է դուռ, բայց չէ կարող լրացնել իր ներկայական տագնապի պատճառով։ Հարկաւոր արդարանք մասի ճիւղաններին են մատնվում առանց բժշկական օգ-

նութեան, քաղաքային բժիշկ չունենք, քաղաքի մարզութիւնը և լուսաւորութիւնը վատ վիճակի մէջ են և մենք ներկայական միջոց չունենք կանոնաւոր հակողութիւն ունենալ և լրացնել պահանջները. քաղաքային սպանդանոցում դռնը մեր օրական հարկաւոր անասուններ և մենք անասնաբոյժ չունենք. խոնաւ և գետնափոխ խորհրդներում հազարաւոր անձինք մատնւելով են չքաւորութեան դռն վիճակին և մենք աղքատանոց չունենք, հիւանդանոց չունենք, բուժարան չունենք, որբանոց չունենք և ինչ ունենք, — ոչինչ և ոչինչ. այս ամենն անտարակոյս ի նկատի ունենալու է մեր ապագայ քաղաքացիութիւնը, և մենք միայն խնայողութեամբ և տնտեսութեամբ պիտի ձգնենք աստիճանաբար բարձրացնել մեր քաղաքի պատիւը և լայնացնել կարիքները։ Կրիտիկական էր պ. նախադասողի դրութիւնը (իրաւասու ի. Սարգիս), որը օրէնքով փոխարինել էր իրական նախադասին, ուժիկ հարցի վերաբերմամբ. «Նա ոչ մի լեզու խօսել չը գիտէր, և քաղաքացիութիւնը ինչպիսի պատասխանեալու առաջին օրն էր իրաւասու լինելուն և առաջին կարգի իրաւասուն էր, որ ռոճկի հարցի վերաբերմամբ պիտի նախադասէր, բայց այն չէր թան, որ կրեց իր վրա, ճշոււ էր նրան, որովհետեւ չը գիտէր չէր թալի ծանրութիւնը Ռուսական մի առած ասում է «КАКОВЫ ПОЛЪ, ТАКОВЫ И ПРИХОДЪ»։ Ինչ և ինչ, մեր նոր ընտրի քաղաքացիութիւնը, երկար տարիներ ծառայելով վարչութեան մէջ իրեն անդամ և քաղաքացիութեան անձնաւորութեանը, նա նրբութեամբ իւրացրել է այդ պաշտօնի վերաբերմամբ մասնագիտութիւնը և, այսօր ամբողջ հասարակութիւնը դո՛ւ է այդ աշխույժ ընտրութեամբ և մեծ յոյսեր է տածում ապագայի համար. մանաւանդ իրաւասուններ մէջ կան այնպիսի անհատներ, որոնց վրա մեծ վստահութիւն ունենք, որ նրանք թուական և դաւաճանելու չեն իւրանց տառնաձաճ վսեմ պարտականութիւնները, այլ պիտի տանեն իրանց ուսերի վրա քաղաքի բարեկարգութեան քաղաքացի մեծանան ամենայն սիրով և պարտաճանաչութեամբ։

Ի դէպս, պ. պ. Տէր-Գրիգորեանցներն Ախալցխայում ինտելիգենտ դասակարգի մէջ առաջին տեղն են բռնում, նրանք են քաղաքային և հասարակական ազգային հիմնարկութիւնների ներկայացուցիչ, իրաւասու, բարեգործական ընկ. տեղական բաժնի ընդհանուր ժողովների նախագահ, երեցիքիւնական հաշիւետես, քաղաքային զարոցի հայոց լեզուի ուսուցիչ, թատերական ներկայացումների բեմի զարդ, ամեն մի բարի նպատակի և գործի նախաձեռնող և առաջնորդ. մի քանիսն զբաղւում են ծառայութեան մէջ բարձր և միջին աստիճանաւորներ, քահանայ, բժիշկ, և ահա այժմ նրանցից մին ընտրվեց և Ախալցխայի քաղաքացիութեան նախագահ, իրանց ազնւական ծագումով եւթութեան սերունդից քահանաների որդիներ են և Ախալցխայում բացառութիւն են կազմում ամեն մի հին գերդաստաններից իրանց տուած մեծ պարզեցումով հասարակութեան համար օգտակար և պիտանի անդամներով. և հենց այդ պատճառով նրանք վայելում են հայ հասարակութեան ընդհանուր համակրութիւնը և յարգանքը, և այդ ձեւով յետոյ մօտենալով պատի տակ զբաղւում են իրենց — այստեղ մտքի....

Եւ բաց արաւ այն, դատարկ էր։ Սիւրէյան մտաւ. տիկինը փակեց բանալիով, բանալին առաւ մօտը և տարօրինակ կերպով ժպտաց. յետոյ կռացաւ և ասեց.

— Զը վախենան, միայն հանդիստ կայ.... ամաւրն շուտ կը թնի. յետոյ կը շարունակենք մեր խնջոյքը։

Ասեց, արագութեամբ ժողովեց հացի սեղանը, ախալցխայի լուսամտի մօտ դրաւ և երբ լսեց, որ տանտէրը զրոյց գոչում է՝ դուրս գնաց սենեակից ճրագը ձեռքին և կանգնեց սանդուղքների վրայ վրա....

— Հէյ, կի՛նի... դուրս էր տանտէրը օրորվելով — ուր ես։

— Այստեղ եմ, աղսա, ասեց կինը — էլի հարկել ես։

— Զայնդ, կինի... դուքն տանտէրը և թողնելով որ իր երկար սուրը դիպչելով սանդուղքների աստիճաններին թնայեց տուած՝ օրորվելով բարձրացաւ։

— Այս երեկոյ մի քանի բարեկամներին հետ էի... ասեց նա երբ հասել էր կնոջը — սակայն այժմ խիստ անթիւ եմ, ուսեւում բան կայ....

համակրութիւնին է, որ այսօր ամեն ոք դո՛ւ է և ուրախ պ. Ն. Տէր-Գրիգորեանի քաղաքացիութիւնը ընտրութեամբ։

Ծննդեան ճրագաւորքին, ինչպէս սովորութիւն էր, այս տարի ևս ուսուցիչներից մի քանիսն ընտրվեցին «աւետար» ման գալով, հանգանակել են յօգուտ աղքատի զարոցների չքաւոր սաների մօտաւորապէս խնամակալութիւնը։ Համակրելի է մեր յարգելի ուսուցիչների այդ ծառայութիւնը, որ նրանք ընտրվելով իրանց կոչման վսեմ նշանակութիւնը, պատրաստ են եղած միշտ ծառայելու և խնամելու իրանց յանձնված սաներին հայրաբար. նրանք պատրաստուում են ամսիս 20-ին նոյն նշանակութիւն մի ներկայացում տալ, որը ինչ ինչ պատճառներով յետաձգվեց. չնորհալուութիւնը Միայն թոյլ կը տամ ինձ նկատելու. մեր յարգելի ուսուցիչներին, որ նրանք փոքր ինչ հոգ տանեն և իրանց ուսուցչական գրադարանը ընթերցարանին։ Մի ժամանակ գրադարանը ունէր մօտաւորապէս 500 հատոր զբոս, ստանում էր Կովկասի և Ռուսիայի դասական պարբերական հրատարակութիւններ. հոգաբարձութիւնը նպատակ էր իր կողմից տարեկան 50—100 թուրքով, և այն ժամանակ, բացի ուսուցչականից կար և աշակերտական բաժին։ Իսկ այժմ անհողութեան չնորհով ուսուցչական գրադարանը օչնչացած է, զբոսի մեծ մասը կորած։ Ներկայ հոգաբարձութիւնն ևս իր նախահաշուով նշանակած է նպաստ գրադարանի 100 թուրքի, բայց չը կայ ձեռնարկող կնքի բերելու գրադարանը և օգտվելու նրանց։ Վաղ ուսուցչի բարոյական պարտականութիւնն է հօգուտ և այդ մասին։ Գուհեք, որ պ.պ. ուսուցիչները նոյնպէս փոխանակ մտաբացականութեամբ սրանից և նրանից զբոս և պարբերական հրատարակութիւններ խնդրելու, պիտի աշխատեն կանոնաւորելու իրանց, ուսուցչական գրադարանը, ստանալով և դանդաղ լրացնելու։

Ինչպիսիքս մի լինում է, եղանակը ցրտաւոր և բերան է։ Ինչպիսիքս մի լինում է, բացի աւելորդ առատ են և գնեք մատչելի։ Այստեղ էլ վաճառականների մէջ յղացել է միտք, կիրակին սուրբ պահելու համար խնդրաժողովը լինել Գումարին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են հետեւեալը. «Յունվարի 1-ին բացվեց այստեղ մի ընթերցարան, որի ղեկավարութիւնը կարծես էին գանձակցիքը։ Տեղիս երկրաւորները, նմանապէս և աւետարական դասակարգից, լաւ վերաբերվեցան այդ հիմնարկութեանը և այժմ անդամներ թիւը հասնում է արդէն 150 հոգու։ Անդամների մեծ մասը հայեր են։ Վճարը համեմատաբար չնչին է՝ չորս ռուբլի տարեկան, այն էլ չորս վճարումների բաժանված։ Բաւականաչափ զբոս ունի ընթերցարանը և բացի սրանից պ. Յ. Ղորղանեան տալիս է ընթերցարանին 22 ալ և այլ պարբերական հրատարակութիւններ։ Ընթերցարանի բնակարանն էլ շատ յարմար է և դասվում է քաղաքի կենտրոնական տեղում, Ս. Գումարին և եկեղեցու մօտ։ Ուրախալ է տեսնել ամեն մի»

— Ինչու չէ....

— Աֆէնդէմ կնիկ, ասեց տանտէրը զրկելով կնոջ — դէ՛հ, գնանք ներս և հաց տուր ինձ ուտելու.... գինի էլ կայ։

— Ի հարկէ....

— Կեցցէ (եւա՛յ) գոռաց տանտէրը և զայլիւնով ներս մտաւ, սուրը հանելով վրայից ձգեց Սիւրէյանի պահած անդուլի վրա, վերաբերւն շնորհակալ մի կողմ և պարզվեց օթոցի վրա։

Տիկինը սեղանը դրեց և կերակուրները ու գինին առաւ բերեց։

— Ա՛րի, դարձաւ նա ամուսնուհի — նստի՛ր այս երեկոյ ընդ հետ մի լաւ ըէֆ անենք։

— Օ՛հ, կնիկ, ծիծաղեց տանտէրը նստելով — դու էլ ըէֆ.... լաւ, այս ինչպէս եղաւ, որ այսօր ուզում ես ըէֆ անել....

— Ինչու, ասեց կինը — ամեն օր դուք էք ըէֆ անում, մէկ օր էլ թող ես ըէֆ անեմ....

— Լաւ, լաւ, ժպտաց տանտէրը սեղանին մօտենալով — դու արժանի ես, որովհետեւ գեղեցիկ ես, խելօք և հաւատարմ....

Եւ առանց նայելու թէ կերածը ինչ էր, սկսեց ուտել։

(Կը շարունակվի)

երկրային ընթացիկությունը մեջ խորասուզված առանձնակի երկրաստորինքը, որոնց թվում է հասարակ արհեստագործությունը, որոնք ցերեկվայ ծանրը աշխատանքից յետոյ նստած՝ զրքեր, կամ լրագրողներ են կարգում:

Այսպիսով երկրի ջրերի և օդի մեջ գտնվող ջրերը են, որ այդտեղ էլ տրեւում է ինքիւն-էնցա. հիւանդութիւնը, Տեղական զինուորները մեծ թվով են հիւանդանում, իսկ թուրքմենների օրաներում՝ զրքերն ոչ մի մարդ չէ մնացել այդ հիւանդութեամբ վարակվելուց: Սակայն, ինչպէս երևում է, ինքիւնէնցան այդ կողմերում անշնորհաբար է անցնում և մահվան դէպքեր դեռ չեն եղել:

ԱՐԴԱՆԱՆԻՑ մեզ հաղորդում են հետեւեալը: «Յուսկարի 5-ին, զինքը, տեղիս զարդը ուսուցիչները, նկատել առնելով զարդը ներկայիս սուղ վիճակը, վճռել էին չափազանց մահ զալ յօգուտ զարդը: Դպրոցի երգիչ աշակերտները երկու խմբի բաժանվեցան և երկու խումբը առաջնորդութեամբ սկսեցին անէ տուն մանջալ: Ամեն տեղ սիրալիք ընդունելութիւն գտնելով, չափազանց մահ կողմերը ժողովցին մօտ 50 բուրլի յօգուտ զարդը:

ԱՐԱՆԱՆԱՆԻՑ մեր թղթակիցը գրում է մեզ որ Արաբալաքի հայ երկրաստորինքի մի խումբ զինուորական զինքնազորներն հայոց Բարեկրթական ընկերութեան ճիւղը բանալ յիշեալ քաղաքում: «Արաբալաք, աւելացնում է թղթակիցը, Արաբալաքի հասարակաց կենտրոն մասը և մոլ լինելով զինքնազոր վերջին ժամանակներս կարծես փոքր առ փոքր պարզվելու է ձգտում: Մեր Արաբալաքը մտածում է այժմ և բարեկրթական ընկերութեան, և թատրոնական ընկեր, և թատրոնական ընկեր, և զարդը մասին, — այդ բոլորը, անկասկած, նկատելի առաջադիմութեան զբաղմունքներ կարող են համարվել: Այդ բոլորի գոյությունը աւելի էլ մեծ նշանակութիւն է ստանում, երբ աչքի առջև կունենանք որ Արաբալաքի ժողովուրդը հարուստ չէ: Եթէ մեր ժողովուրդը այդ իր բոլոր զինուորականութիւններն իրագործելով աշխատանքներ և եռանդով առաջ կը տանի, — դա նրա ոչ թէ ներկայիս, այլ բարոյական ոյժի ապագայը կը լինի:

Թիֆլիսի օպերային թատրոնի եկամուտները նախանձնել չէ կարելի համարել վերջին օրերում, թէև ընդհանրապէս լաւ օպերաներ են խաղացվում. բայց և այնպէս հասարակութիւնը քիչ է լինում: Մինչև անգամ «Վիլհելմ-Տէլ» օպերայի երկրորդ ներկայացմանը թատրոնը կիսով չսփռվեց: Դա արդէն չէ Մեր հասարակութիւնը երևում է որ ոչ թէ միայն ճաշակից, այլ և զգացմունքից էլ զուրկ է:

Ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրողները, նոր ծրագիր է մշակվում, որով աւելի պէտք է ընդարձակվի կրօնի և առհասարակ կրօնական աւարակները դաստառութիւնը բոլոր միջնակարգ աշխարհային դպրոցներում:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը: «Թիֆլիսի մասկաճառները, որոնք ամբողջ օրը դառնալի են գործ ունեն, իրանց անխնայութեան և հարստահարութեան մէջ չափ ու սահման չունեն: Այդ մասկաճառները, բացի նրանից, որ իրանց դաւալուն իր միջոցով խաբում են միայն զինքնազորներին, որոնք իրանց ապրանքը բերում են քաղաք ծախելու, այլ և շատ անգամ իրանց ուղածը առաջ տանելու համար, զինքնազորներին ծնում են: Այդպիսի դէպքեր շատ են պատահում: Մի այդպիսի դէպք էլ պատահեց այս օրերս Սաղուս: Մի մասկաճառ առնում է Արաբալաքի կողմերից եկած զինքնազոր մի զոյգ եղ 50 բուրլով: Մի քանի օր նրան դէս ու դէն տանելուց յետոյ, յայտնում է որ 35 բուրլով է գնել, և մի կօպէկ աւելի չի տալ: Գիւղացին քաջութիւն է ունենում իր ապրանքը ուրիշին ծախելու: Եւ ահա կատաղած մասկաճառը խաբելով զինքնազորն և նրա ընկերին, կանչում է իր մօտ, և սկսում է այնպիսի անխնայ կերպով ծնել, որ զուցէ նրանք իրանց տուն էլ չը վերադառնային, եթէ կողմակի անձինք չը միջամտէին: Ով պէտք է մի փոքր տանձաւարի Թիֆլիսի այդ սանձաւարակ մասկաճառներին, որոնք սարսափի

տակ են պահում զինքնազորներին, որպէս զի նրանք երբեք չը համարձակվին իրանց կամայականութեան դէմ գործել:

Երկուշաբթի, յունվարի 15-ին, կայացաւ Թիֆլիսի ժողովարանի տարեկան ընդհանուր ժողովը: Հաստատվեց, զրկվեց առանց վիճաբանութեան, աւագների խորհրդի առաջարկած ներկայ թւի նախահաշիւը, որով մօտաւ սպասվում է 44,696 ռ., իսկ ծախս 43,327 ռ.: Այնուհետև սկսեցին աւագները և վերաստուգող յանձնաժողովի ան. պաշտօնի ընտրութիւնները: Աւագներ ընտրվեցան՝ պ. պ. Գ. Տէր-Ստեփանեանց, իշխ. Ն. Ամատունի, Ա. Մամիկոնեանց, իշխ. Գ. Բէհուլեան, Գ. Օրբելի, Ա. Մէլքե-Բէգլարեան, իշխ. Գ. Թումանեան, Խ. Խաչատուրեան և իշխ. Գ. Թումանեան: Սրանց կանգնողները ընտրվեցան՝ իշխ. Կ. Օրբելի, իշխ. Ն. Տէր-Ստեփանեան և Մ. Աշխուրի: Վերաստուգող յանձնաժողովի անդամներ ընտրվեցան՝ պ. Ղ. Ափեանց, Մ. Ղազարեանց և Հ. Գուրկանով, իսկ կանգնող ա. պ. Գ. Տէր-Ալեքսանդրեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆՈՒՄ

Մենք ան տուն առնելով Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանում ընդունելութիւն եղաւ: Այդ մասին «Արեւել» լրագրից հաղորդում է հետեւեալը: «Ժամ 8-ին Ն. Ամատունի անունով ներկայացան Աղջալիս Ժողովուրդային Գիւղեր, Գաղաքական Ժողովը, Երեսփոխանը ուսման, Թեոֆիլ Խորհրդը ներկայացուցիչը, Թադ. Խորհրդը ուսման և աղջալիս ընկերութեանց ներկայացուցիչը: Այս ընդունելութեան ներկայ գտնուեցան նաև Ամեն. Խորհրդի Սրբազան և Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն»:

Աղջալիս Ժողովի Ատենապետ և Գաղաքական Ժողովի Ատենապետ զինքնազոր Պատրիարքին մի մի ուղերձով, որոնց իր կողմից Պատրիարքը պատասխանեց ճառով: Առաջ եմք բերում Գաղաքական Ժողովի Ատենապետ Սահակ Ղազարեանին ուղերձը: զվարակ. կետերը: Ահա այս ուղերձը. «Ամեն. Ս. Պատրիարք Հայր, սոյն բերեալս առնելով Գաղ. Ժողովի առաջ պարտականութիւն կը համարի հրապարակաւ իւր երախտագրութեան յայտնել առ Ձեր Բարձր Սրբազանութիւն այն անխնայ ջանքը համար, զորս անձանձիր նուիրեցիք աղջալիս գործը ընթացից բարեօրոշման, այն հայրական հողածութեան՝ որով խնամեցիք խեղճերն ու լիցուաւորներն, և որ մեծադիմ է, այն անխնայ հաստատաւորութեան համար, որով ջանադիր եղաք պաշտօնանկ աղջալիս ամեն իրաւունք և հաստատութիւն: Արդարեւ, Բարձրաշնորհ Տէր, Ձեր ամեն ջանքեր չը պատկանեցան և վերջնական կարգադրութեան կարգու դաւաճական, ներքին և արտաքին խնդիրներ, սակայն վստահ եմք, որ շնորհիւ մեր Օգոստոսիաւ և Հայրապետ Կոստան և իւր Բարձրապետի նախաճառաց արդարատիւութեան, մօտաւոր ապագայի մէջ պիտի իրականանան Ձեր ու Աղջիկն ջրեր իղճներն»:

«Առ այս խնդրեմք, Բարձրաշնորհ Սրբազան Հայր, որ անխնայ և յուսալից համբը շարունակել Ձեր աշխատութիւնը և մատուցանել յոյս կայսերական Գահոյից Ձեր հօտին ցաւերն ու պիտոյն և նրանց դարմանը խնդրել: «Անկրկայ հմբ, որ լսելի պիտի լինին Ձեր խնդրումները, և առ Օսմանեան Դաւադարան Գահին իւր բազմադարեան հաւատարմի հպատակութեամբ բարեկազմ զոտուող Հայ աղջը, պիտի օրհնէ միշտ զվահ անուն իւր սրբելի Նընակալին»:

Խորէն Պատրիարք Ալեքեանը պատասխանելով այդ ուղերձներին իր ճառի մէջ, ի միջի այլոց ասեց. «Հայ աղջն երկու դիւանոր բարեկամութիւններ ունի, որոնցմով կը պանծայ. մին իւր նախնի նուիրական աւանդութեանց անվերջ և անխնայ պահպանումն և միւսն իւր դարաւոր հաւատարմութիւնն առ օսմանեան մեծադոր Գահին, եւ որ, երկուստեան իւր ընթացիկ և իւր ամեն խորհրդակցութեանց ու գործառնութեանց մէջ այդ երկու սկզբունքներն ունի իրեն ուղեցոյց: Այն ամեն խնդիրներն, զորս աղջալիս վարչութեան Գաղաքական Ժողովը տնօրինեց և յանձնարարեց մեզ ներկա-

յիլ կայս. կառավարութեան, ուրախ եմ յայտարարելու որ կայս. կառավարութիւնը միշտ խնամք ունեցաւ բարձր լուծում մը տալու համար այդ խնդրոց»:

ԼՕՆԴՈՆԻ ՊԱՐՄԻՑ ՆԱԽԿԻՆ ԳԵՍՊՈՆ ՄԵԼԻՔՈՆԻԱՆ

Լոնդոնի «Թրուիթ» լրագրից հաղորդում է թէ Լոնդոնի պարսկական դեսպան Մեքլեոն Խան պաշտօնանկ եղած էր, որովհետև չէր ուզել ստանձնել Նասրէտոյին Շահին Եւրոպա ուղևորութեան ծախքի մէջ մասը: Պարսիկ «Գոյուս» լրագրի խմբագիրը այս մասին մի խօսակցութիւն է ունեցած Պարսիկ պարսկական դեսպան Նազար Աղայի հետ (նմանապէս հայազգի), որը հետեւեալ զանազանութիւններն է տուել Մեքլեոն Խանի հրաժարեցման վրա:

«Թրուիթ» լրագր ճշմարտութեան հակառակ է, որովհետև իշխան Մեքլեոն Խան Լոնդոնից ետ է կանչուել կամ լաւ եւ՝ պաշտօնանկ է եղել Շահին կառավարութեան հակառակ լեզու գործածելու համար: Եւ վերջապետութիւն իր նախարարների ղեմ Մեքլեոն Խանի ընթացքն այնչափ դժգոհ է մնացել, որ հարկադրվել է նրա տեղ ուրիշ դեսպան կարգել: Թիֆլիսի պարսկական ընդհանուր հիւպատոս Միլայի-Էլ-Վիլզըս Լոնդոնի դեսպան կարգեցաւ Մեքլեոն Խանի տեղ: Այդ դեսպանեցեալ, որ մեծամեծ կարողութեամբ է օժտված, ուղևորվել է արդէն՝ իր պաշտօնավարը: Բացարձակապէս անհիմն է այն խօսքը թէ Պարսկաստանի Մեծ-Եւրաքոսը մտադրված է պարսկական դեսպաններին թոշակները զեղչել Շահին Եւրոպա վերջին ուղևորութեան ծախք այս կերպով զոյցելու համար: Նասրէտոյին Շահին Եւրոպա վերջին ուղևորութեան ծախք հինգ միլիոն ֆրանքից աւելի է, և ոչ թէ երկու միլիոն, և ծախքերի է ենթադրել թէ այդ ծախքը պարսկական դեսպանութիւնների վրա բեռնաւորել մտադրվել կայ: Ընդհակառակն, Շահը թէհրան վերադառնալով հրամայ է տուել որ իր վերջին ուղևորութեան միջոցին պտուած երկիրներուն պարսկական դեսպանների թոշակներին վրա յաւելում լինի իւր այս որոշումը արդէն գործադրւած է:

«Եթէ «Գոյուս» ճշդիւ արձանագրել է Նազար Աղայի խօսքերը, ասում են արտասահմանեան լրագրողները, պէտք է ենթադրել թէ Մեքլեոն Խանի և Եւրոպայի նախարարութեան մէջ եղած անհամաձայնութիւնները շատ ծանր լինին: Պէտք չէ նաև մոռանալ թէ այս առիթով մի քանի շաբաթ առաջ նոյն իսկ Լոնդոնի պարսկական դեսպանատան կողմէ առ «Թամը»-ը հաղորդւած կէս-պաշտօնական մի տեղեկութեան համաձայն, Մեքլեոն Խանին հրաժարեցումը իր և պարսիկ Մեծ-Եւրաքոսի մէջ «անձնական» մի անհամաձայնութեան հետեանց է:

«Մեքլեոն Խան թէհրան կերթալ, որտեղից քիչ ժամանակից յետոյ Լոնդոն պիտի վերադառնայ, ուր վերջնապէս հաստատել է իր բնակութիւնը»:

ՆԱՍԱԿ ՇԱՀԵՑԱՐԱՆԻՑ

Ժընէվ 13/1 յունվարի

Նոր տարվայ առիթով տեղիս թատրոնում սկսել են մի քանի անգամ ներկայացնել Վագների chef-d'oeuvre, «Լոնգիլդին» օպերան, որի բովանդակութիւնը վերցրած է գերմանական մէկ հին լեգենդայից: Բայց ներկայացումներից զերեւաւորութիւն կայ ևս դասախոսութիւնները տարբեր, որոնց նպատակը պիտի լինի հասարակութիւնը ծանօթացնել գերմանացի երևելի երաժշտապետի կեսերը և նրա գործերի հետ:

«Լոնգիլդին» ներկայացումները յիշեցրին մի անգամ, որը պատահել է 1887 թվականին և որը բաւական ընտրողում է Եւրոպայում մեծ դեր կատարող մի աղբի թույլ կողմերը:

Այս օպերան ներկայացվել է ամենուրեք՝ Գերմանիայում, Անգլիայում, խառնաշառ, Սպանիայում: Միայն Ֆրանսիայում է, որը, զրդված քաղաքական դաժնապէս պատճառներով, այժմ յամաւորութեամբ վաճառվում է իր բեմը Վագների գործածների առաջ:

«Լոնգիլդին» օպերայի միակ ներկայացումը տեղի ունեցաւ Պարիզում 1887 թվականին Eden-Théâtre-ում, որը ամբողջ քաղաքը խառնվելու մէջ գցեց ժողովուրդը խառն-խառն հաւաքվում

է ներկայացման ժամանակ թատրոնի առաջ, աղաղակում է, շվիվացում է և պահանջում է, որ դադարեցնեն ներկայացումն. ներքը մի և նոյն է կատարվում ևս կառավարութիւնը, աչքի առաջ ունենալով այս խառնակութիւնները, արդեւում է երկրորդ ներկայացումն:

Ֆրանսիական լրագրողներից շատերն այս անգամ առիթով պախարակում են պարիզցիներին իրանց թիւով աղաղակութեան համար: Նրանք առարկում են, թէ զեղարուեստը հայրենիք չունի և չը պիտի էլ ունենայ: Այս տեսակետից գերմանացիներն աւելի լուրջ են. նրանք իրանց թէպէտուարում միշտ ունեն «Ֆրանսուս» և «Կարմէն» (Ֆրանսիական երաժշտութիւն) և ոչինչ ու չաղբուրի չեն դարձնում, թէ ինչ աղբուրեան են պատկանում իրանց հեղինակները: Գերմանացիների կատաղի թշնամի, «Ֆրանսիական» լրագրի հաշակաւոր խմբագիր Բոչֆոր ասում է ներկայացման միւս օրը: «Այդ քաղաքում դրած աղաղակները, որոնք իրանց պարտը կատարած են համարում գնալ թատրոնում և շվիվները, չեն քաջվում ներկայացումից յետոյ կոնծել Միլեմիտի դարձնելու, որը օպերայի եկած երկրիցն է բերված»:

Այժման քաղաքականութիւնն է որ թշնամացի է երկու հարևան աղբերը: Փաղաքակաւորութիւնն էր պատճառ, որ գերմանական կառավարութիւնը և մինչև անգամ դիտանականները չուզեցին մասնակցել անցեալ տարվայ Պարիզի համաշխարհային ցուցահանդիսին: Բայց հասարակ դասակարգն այսպէս չը վարվեց. գերմանացի բանուորները, որոնք Պարիզում ամենայն սիրով էին ընդունված իրանց ընկերակիցներից, թույլ երկրորդ տեղն էին բռնում բանուորական կոնգրեսների մէջ: Այս երկույն պարզ ապացուցանում է, որ զանազան աղբեր կարող են խաղաղ, համարալի ապրել միմեանց հետ, եթէ նրանք ունենան ընդհանուր շահեր և ճշգրտութիւնը:

Փոքրիկ Շվեյցարիան, որը բաղկացած է 22 առանձին-առանձին կառավարութիւններից, մեզ օրինակ: Ինչպէս յայտնի է, այդ հանրապետութեան մէջ ապրում են զլիաւորապէս գերմանացիներ և ֆրանսիացիներ, որոնք իրեն դաժնակիցներ կառավարում են իրանց գործերը այնպիսի համարալիութեամբ, կարծես մի հատ աղբուրի են կապում: Ուսումնարաններում երկու լեզուն էլ պարտաւորեցուցիչ է և բոլոր պետական ծառայողները այդ լեզուները պիտի խմանան: Խառն ամուսնութիւնները սրանց մէջ քիչ չեն պատահում, որով այս երկու աղբուրիներն աւելի են մօտենում իրար հետ: Առանց ընդհանուր շահերի այսպիսի բարեկամութիւն հազիւ թէ պատահէր այս երկուսում: Իսկ ինչ վերաբերում է փոխադարձաբար յարգանքին դէպի գեղարուեստը և գիտութիւնը, դրա համար աւելորդ էլ է խօսել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Բէլգրադում ժողովուրդը կոտորեց աւստրիական զենպանատան շինութեան ապակիները»:

«Վիեննայում լուր է տարածված որ Թիւրքաց մեծ-վիլդը Բիսմարկ-Բալան հրաժարական է տալիս իր պաշտօնից»:

«Գերմանական նոր բէլլատային կառավարիչի սօցիալիստների դէմ օրէնքը, առանց որ և է փոփոխութեան, իսկ եթէ բէլլատայը չընդունի օրէնքը, այն ժամանակ բէլլատայը կը լուծվի և Վիլհելմ կայսրը կը դիմէ ժողովրդին մի մանիֆէստով, որի մէջ մատնացոյց կան այն հանգամանքի վրա, որ յեղափոխութիւնը սպառնում է միայնակութեան գոյութեանը»:

«Ատտեան դքսի (նախկին սպանիական Ամեդէյ թագաւորի) թաղումը կը կատարվի 10/22-ին յունվարի, Տուրինում: Խառնական թագաւորական դոյզը ուղևորվում է դէպի Տուրին»:

«Ֆրանսիայի սենատի նախագահ ընտրված է Լըբուայէ, որը նախագահական Թիւրքոյի նստելով, շնորհակալութիւն յայտնեց այն պատիւ համար որ սենատը նրան անում է, ընտրելով նրան ինքնորոշ անգամ սենատի նախագահ»:

«Թիւրք զինուորները Կրեթէ կղզու վրա շարունակում են բարբարոսութիւններ գործել. նրանք մտնում են եկեղեցիներ և կոտորատում են իւսերը: Ժողովրդի և զինուորների մէջ շարունակ ընդհարումներ են լինում: Ասում են որ վերջին ընդհարումների ժամանակ սպանվածների և վիրավորվածների թիւը շատ մեծ էր»:

—Պորտուգալացի կառավարութիւնը վճռած լինելով ընդունել Անգլիայի վերջնադիրը, երկրի ժողովրդի մէջ սկսեց տիրել աւելի մեծ յուզմունք և անբաւականութիւն: Առեւտրական ընկերութիւնները բողոքներ հրատարակեցին, և համալսարանական ուսանողները, ժողովրդական խմբերի հետ խառնվելով, ցայցեր արեցին Լիսաբոնի փողոցներում: Հորդի կառավարութիւնը, կորչելով Անգլիան աղաղակելով: Յայտնի է արդէն որ այդ բոլոր յուզմունքները հետևանքն այն եղաւ, որ Պորտուգալիայի մինիստրութիւնը ստիպվեց հրաժարական տալ, և այժմ կազմակերպվեց նոր մինիստրութիւն:

—Բերլինից ստացած վերջին հեռագիրներին նայելով, Գերմանիայի մայրաքաղաքում, յունվարի 9-ին (21), տեղի ունեցաւ սոցիալիստների ժողովը: Վէստֆալիայի ածխահանքերի բանուորների պահանջները մերժվեցան հանձնարարելու կողմից:

—Մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում են, որ Լիսաբոնում բազմաթիւ ձերբակալութիւններ են տեղի ունենում:

—Կ. Պոլսից գրում են Լոնդոնի «Daily News» լրագիրին, որ սուլթանը, զանազան կողմերից եկած բողոքներին զիջանելով, հրամայեց արդարադատութեան մինիստրին՝ նորից դատ սկսել Մուսա-պէյի դէմ. բայց մինչև այժմ դործը չէ սկսված, և կասկածում են, որ սուլթանի մտադրութիւնը կարողանայ իրագործվել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 16 յունվարի: Գերմանիայի Բադեն-կու մարզին առկիւմ երեքօրեայ սուգ է նշանակւած 55-դ հետևակ Պոլսի զորազինին, որի շէֆըն էր հանգուցեալը: Նորին կայսերական Մեծութեան կայսրուհի Մարիայի հիմնադրութիւնները զիջանաւոր կառավարել Տրոյնիցիի արձակված է պաշտօնից իր խնդրի համաձայն: Երէկ զերմանական կայսրի ծննդեան տօնի պատճառով հրաւիրված էին Անիլիով պալատում զերմանական զեւպանը և զինուորական լիազոր ներկայացուցիչը: Գերմանական զեւպանի մօտ շնորհաւորելու գնաց ներքին գործերի մինիստրը:

ՎԻԵՆՆԱ, 16 յունվարի: Գերմանական կուրբի երէկվան ժողովում պատգամաւոր Պլէնից յայտնեց, որ գերմանացի կարող են իրանց բաւական գոհացած համարել չէլսերի հետ կայացրած համաձայնութեան առիթով: Չէլսերի մէջ կուրտուրական և դպրոցական խորհուրդների բաժանումն, դատաստանների չըջանների կարգաւորելը, չէլսական պատգամաւորների ժողովի մէջ աղգային ներկայացուցիչների հաստատելը, որոնք իրաւունք կունենան «veto» տալու երկրի ներքին կարգերի և սէյրի ընտրութիւնների փոփոխութիւնների վերաբերութեամբ, այլ և լեզուի հարցերի վերաբերութեամբ—այդ բոլորը Պլէնիցի

խօսքով մի վճռական առաջադիմութիւն է, որին հասել են գերմանացիք, շնորհով իրանց յաջորդական գործունէութեան: Հիմա՛նակով, երբ կը վերաքննվեն լեզուների մասին որոշումները, գերմանական կուրտուրական, — շարունակեց Պլէնիցը, — հաւատարիմ կը մնայ իր սկզբնական հայեցքին՝ գերմանական լեզուի դերի վերաբերմամբ Աւստրիայում:

ՄԱՍՈՎԱ, 16 յունվարի (Ստեֆ. Գործ. հեռագիր): Գերմանիայի Օրէքսի նախարարը կատարելապէս աջակցեց: Իտալական զորքերը մօտն Ադուա երկէ կէսօրից յետոյ, ժամը 3-ին, իսկ նրանց ետեւից մօտն իտալական ծառայութեան մէջ գտնվող տեղական զորքերը: Աղգարանական լեզուները հոգեւորականութիւնը լաւ հանդիպեցին զորքին: Գերմանիայի Օրէքս իր վրա դրած յանձնարարութիւնը կատարելուց յետոյ կը վերադառնայ Աւստրիա:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 17 յունվարի: Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաւիչ աւագը ուղևորվեց Բերլին: «Собрание Тарифов» հրատարակութեան մէջ տպված է հազորդակցութեան ծանուցարանների մինիստրի կարգադրութիւնը, որով արգելվում է երկաթուղային վարչութիւններին և ազնւոններին պահանջել բեռներ ուղարկողներին՝ ապահովութեան ստորագրութիւններ:

Պ. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՐՈՍԱ

Յունվարի 16-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէն	90	35
Բերլինի վրա 100 մարկ	44	10
Փարիզի վրա 100 ֆրանկ	35	85
Ոսկի արծէն	7	28
Մարսայի կուպոններ	145	75
Արծաթ	1	9
Բորսայի զիջումներ	6	70
Պետական 5% օրոմս 1-ին չըջանի	99	60
— — — — — 2-րդ	99	60
— — — — — 3-րդ	99	50
— — — — — 4-րդ	99	62
— — — — — 5-րդ	99	50
— — — — — 6-րդ	99	50
Նոր 4% օրոմս	85	12
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին չըջանի	100	25
— — — — — 2-րդ	100	37
— — — — — 3-րդ	100	87
Եւրոյի 5% օրոմս փոխառութ.	243	25
— — — — — երկրորդ	229	50
51/2% օրոմս	103	—
Ոսկեայ թէնտա	163	—
Եւրոյի 5% օրոմս փոխառութ.	137	—
Նոր երկաթուղային օրոմս	99	75
5% օրոմս փոխառութ.	142	62
— — — — — փոխ. կրեդ. ընկ. միտ.	94	12
— — — — — փոխ. կրեդ.	99	—
Գրաւ. թղ. Ալիւ. բանկի	103	37
Գրաւ. կրեդ. բանկի	—	—
6% օրոմս. թղ. Թիֆլիսի—27	43	—
— — — — — Գրաւ. կրեդ. 18	43	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրոմս	95	50
— — — — — քաղաքային	94	75
Մոսկույի քաղաք. օրոմս քաղաքային	95	50
Օղէսայի	—	—
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրոմ.	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը	—	—

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԵՆՈՒԹԵԱՆ Համաձայն սրանով հրաւիրում են ԿՈՒԿԻԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱՍԿԵՐԻ ԹԱՆԴՈՅԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵԾԱԿԱՆ Ժողովուրդներին շնորհ բերել յիշեալ եկեղեցու օրորդաց ուսումնարանի դաշինքը առաջիկայ ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ, ԱՌԱՌՈՏԵԱՆ ԺԱՄԱՆ 11-ԻՆ, ընտրելու Թանգոյեան եկեղեցու համար երեքօրեայ և օրորդաց զպրոցի հոգաբարձական ընտրութեան համար ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐ:

Մանուկները, — Եկեղեցական-ծխական ուսումնարանաց կանոնադրութեան 28-որդ յօդուածի համաձայն պատգամաւորաց ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեն միայն նրանք, որոնք 25 տարեկանից աւելի են:

Վերադառնալու բարեկարգութեան եկեղեցաց հայոց Հաւարարի՝ Աշոտ քահանայ թէմուրազեանց:

1—2



ԲԱՐՁՐԱՌՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՏԱՍԿՈՎԱԿՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ունի փաստի, գրելու, գրքերի, լրագիրների, ծխախոտի զոյնաւոր, կաշմի և ուրիշ տեսակ թղթեր, ծախվում են գործարանի դնով. կան նոյնպէս և մեծ քանակութեամբ գրելու պարագաներ:

Թիֆլիս. Դժոքողայա փողոց. Ազնական կարուածական բանկի շինութեան մէջ:

1—20

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՏԱՍԻՈՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆՑԻ

ԳՏԵՎՈՒՄ Է ՍՈՒՈՒՄ, ԳՄԵՈՎԱԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ԵՄԱՆԱԶԱՐՈՎԻ

ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՅ ՍԿՍՍԵ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԿԵՐՏԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳԻՄՆԱ- զիւայի, բէալական ուսումնարանի, կաղէտակի կօրպուսի և Ներսիսեան ուսումնարանի համար:

Ուսումնարանում, բացի զանազան գիմնազիական առարկաներից, աւանդ- վում են այլ ևս հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լեզուներ:

Ցանկացողները կարող են ԴԱՇՆԱԿԻ (բոյալ) վրա ածել սովորել. զրա հա- մար պանսիօնում կայ առանձին մասնադէտ ուսուցիչ:

Ուսումնարանում ընդունվում են երեքեկներ, ԿԻՍԱՌՈՇԱԿԱՌՈՐՆԵՐ և ԹՈՇԱԿԱՌՈՐՆԵՐ:

Հասցէն. Тифлиς, Гановская улица, домъ Шахназарова.

5—5

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՍԱՐՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՍԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՐՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂԱՊԱՆԱԿԱՆ ԿՈՎԱՅԵՆԵԱՆ ԱՍԱՐՆԵՐԻ ԷԼԿԻՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂԱՊԱՆԱԿԱՆ ԱՍԱՐՆԵՐԻ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՆՏԱՍ

ԹԻՖԼԻՍԻՍԻՍ՝ Կովկասեան զեղա- վաճառատան, և պ. պ. Շահ- պարոնեանցի, Մակկերի, Սէնչի- հովսէի և Ազմուրդի զեղա- տներում: ԲԱԳՈՒՄ մէջ, Բէկկէրի մօտ, ԳՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկոչկի մօտ, ՍՍԱՎՐՈՊՈԼՈՒՄ Բրոննօցկու մօտ և ԵԿԱՅԵՐԵՆՕՒԱՐՈՒՄ:

47—52 (Հ.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄՆԱԿԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԻՆԵՆԻ

(Կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ա մ ի ն օ Ր

Ա Ռ Ա Ռ Ո Տ Ն Ե Ր Ը

ՐՈՒԴԿՈՎԱԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՔԻՆԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԻՆԻՆԻ—11—12 ժ. ականջի, կուկուրի, զիւրի ց. և սիֆիլիսի (փրկարութ. և ատամացալի)
ԱՐՏԵՄԻՆԻ—12—1 ժ. երեքաբլթի, ուրբաթի և կիւրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի:

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

ԳԱԴՕՄԱԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջրային ց. (էլեկտրօտերապիա):
ԲԵՆԿԻՆԻՆԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մանկաբարձ ու ծ ու ծ ի ը՝ Երեւանցի ան և Արտազեան
ճար—50 Կ. Համալսոյրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԴԿՈՎԱԿԻ

Անհրաժեշտ եմ համարում հրապարակով յայտնել ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԻԿԱՍՏՈՒՆ ԵՐԱՐԻ ՊԱՏԻՆԻՆ՝ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ մեր կամխական գործն, օր սկսված է 1883 թիւից շարունակվում է: Գործակալ սովորականի համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանալու ու ճանխելու հետեւեալ քաղաքներն. ՌԻԶՈՒՆ—ԱՐԱՅ, ԳԼԿԱՐՎԱՐ, ԱՍԽԱՐԱՍ, ՄԵՐՎ, ՉԱՐՏՈՒ, ԱՄՈՒԴԱՐԱՆ, ԲՈՒԽԱՐԱ, և ՍԱՄԱՐԱՆԻ, որտեղ և ունեն կանտոններ, նոյնպէս և ԲԱՂՈՒ: Նաև կատարում եմ ապրանքների գնելու, ծախելու և ուղարկելու պատվերներ:

Ցանկացողներն պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցեով. ՎՅՄՄԻ-ԱԴԱ—ԱԼԵԲԵՐԿԱ ՆԱԶԱՐՈՎԱՆ.

5—12.

Ա. Վ Օ Լ Յ Շ Մ Ի Տ,

ԲԻԳԱ, Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ Ե ԶԱՄԲՈՐԴ.

գոյութիւն ունի 1845 թիւից:

ԱՐԱՂ—ԲԱՇԵՆՈՒ և ՕՂԻՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Պատրաստում է մասնաւորապէս. ԱՐԻԿՈՏԻՆ, ԲԵՆԵԴԻԿՏԻՆ, ԵԱՐՏԻՔ, ԿԻԻՐԱՍՈ՝ հօլանդական, կակաօի, կաֆէի, ՄԱՐԱԿԱՆ, մրգերի ԼԻԿԵՐՆԵՐ, ԿԵԼԻՆ՝ շալիկաներ,՝ մրգերի շաւտօյկաներ,՝ ՏՄԻՆԻ՝ ասված արաղ, նմանապէս ՕՂԻ, ՐՕՄ, ԿՈՆԻԱԿ, ԱՐԱԿ, միակ իսկական ԲԻԿԱՅԻ ԿՈՒՆՏԵՆԱՆ խոտի ԲԱԼԶԱՍ, ՍՊԻՐՏ, ՄԱԲԻՎԱՍՏ ՕՂԻ, ԹԹԻՄՈՐ և այլն:

Իմ պատրաստած արտասահմանեան լիկերներ իրանց յատկութեամբ՝ պակաս չեն ներմուծվածներից, բայց անհամեմատ էժան են: Նրանք արժանացան թէ համախառնային և թէ այլ ցուցահանդէսներում ամենարժք պարգևներին:

Օղիի զործարանի արդիւնաբերութիւնները ծախվում են բոլոր զինվածաւանդներում:

Պրէյսկուրանտները ուղարկվում են անվարձ:

7—10 (Հ.) № 1

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(Միջաշէկան փողոցի վրա, Թիֆլիսում)

Տրվում են հայերէն գրքեր: Ամսական վճարը 20 կօպէկ է: Սկզբնական զպրոց- ների աշակերտները և աշակերտուհիները վճարում են 10 կօպէկ:

Գրադարանը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2, և երեկոյեան 5 ժա- մից մինչև 8 ժամ:

5—5